

DOI: 10.57192/18291864-2022.4-253

**Հայկազ Փ. Հովհաննիսյան**  
*Պատմ. գիտ. դոկտոր*

**ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ-ԻՎԱՆ ՊԱՍԿԵՎԻՉ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ\***

**Բանալի բառեր** – Ներսես Աշտարակեցի, գեն. Իվան Պասկևիչ, հակամարտություն, արքայ, Բեսարաբիայի թեմ, ռուսական քաղաքականություն, զեկուցագրեր, նամակներ, վերլուծություն, քննարկում:

**Մուտք**

Հայ և ռուս պատմագիտության մեջ բազմիցս քննության առարկա է դարձել Իվան Պասկևիչի և Ներսես Աշտարակեցու հարաբերությունների հանգուցահարցը: Ավելին՝ հարցի առնչությամբ պատմագիտական գործերում Պասկևիչին է վերագրվում վերջնական հաղթանակը, իսկ Ներսես Աշտարակեցու՝ Բեսարաբիայում թեմակալությունը ներկայացվում է որպես արքայ<sup>1</sup>:

Մեր կարծիքով, սակայն, դրան վերաբերող կարևոր շատ փաստեր և իրողություններ դուրս են մնացել պատմաբանների ուշադրությունից, որոնք ոչ միայն լրացնում և ամբողջացնում են Ներսես Աշտարակեցու գործունեությունը, այլև որոշակի ձգգրումներ են մտցնում հարցի մեջ:

Հանգամանքների բերումով և գլխավորապես այն պատճառով, որ Ներսես արքեպիսկոպոսի անմիջական մասնակցությունն ու օգնությունը նպաստում էին իր գլխավորած ռազմական գործողու-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11.2022: Տպագրվում է ՀՀ ԿԳՄՍՆ գիտկոմի թեմատիկ (21T-6A114) ֆինանսավորմամբ:

1 «Հասնելով Աշտարակեցու փաստական արքային, - գրում է հարցին խորագիտակ պատմաբան Վ. Դիլոյանը.- Պասկևիչը իր թոյնը սկսեց թափել բոլոր նրանց վրա, ովքեր համակարծիք էին Ներսեսին և բաժանում էին նրա հայացքները» (Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., ԵՊՀ հրատ., 1989, էջ 311):

*Վլեդ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022*

թյունների հաջողությանը, ֆելդմարշալ Իվան Պասկևիչը<sup>2</sup> ստիպված էր հաճախակի դիմել նրա աջակցությանը: Սակայն հետագայում, չկարողանալով հանդուրժել Ներսեսի մեծ ժողովրդականությունն ու ազդեցությունը հայության և ռուս գեներալների շրջանում, գեն. Իվան Պասկևիչը նրա նկատմամբ լցվում է անհանդուրժողականությամբ ու նախանձով. ծնունդ է առնում Իվան Պասկևիչ-Ներսես Աշտարակեցի հակամարտությունը:

## 1. Հակամարտության սկիզբը

Ինչպես գրում է հարցին խորագիտակ պատմաբան Ալ. Երիցյանը, «Պասկևիչը ցանկանում էր, որ Ներսեսի անունը այլևս չհիշվի Կովկասում, որ նա էլ Մադաթովի նման հեռացվի այս երկրից... քանի որ Ներսեսն իր մեծ հեղինակությամբ, իր հմտությամբ, ձգտումներով ու եռանդով կարող էր միայն խոչընդոտներ ստեղծել նրա կազմակերպած նոր վարչության համար: Բայց ինչպես հեռացնել նրան, երբ նա մի հզոր ուժ էր և ռուս հրամանատարին հավասար դիրք ուներ և դեռ նոր էր ստացվել կայսեր բարձրագույն հրամանը Ներսեսի շնորհների մասին և այդ հրամանը պիտի կատարվեր»<sup>3</sup>: Իսկ հրամանը նախատեսում էր Ներսես Աշտարակեցուն արժանաց-

---

2 **Պասկևիչ Իվան Ֆեդորովիչ** – կոմս Երիվանսկի, սրբազնագույն իշխան Վարշավսկի, գեներալ-ադյուտանտ, գեներալ-ֆելդմարշալ: Ծնվել է 1782 թ. Պոլտավայում, ազգությամբ ուկրաինացի էր, հայրը հարուստ կավածատեր էր: Բարձրացել է ռազմական բոլոր աստիճաններով: Ռուս-թուրքական 1806-1812 թթ. պատերազմում՝ 1806 թ. Բրախլով ամրոցի գրավման ժամանակ, զլխից վիրավորվել է, սակայն ողջ է մնացել: 1809 թ. ստացել է գնդապետի աստիճան: Մասնակցել է 1812 թ. Հայրենական պատերազմին. Լայպցիգի ճակատամարտում աչքի ընկնելու համար ստացել է գեներալ-լեյտենանտի աստիճան: Այստեղ էլ կայացել է նրա և մեծ իշխան Նիկոլայ Պավլովիչի հանդիպումը (հետագայում՝ Ռուսաստանի կայսր (1825-1855)), որը շուտով վերաճել է սերտ ընկերության: 1826 թ. գործուղվել է Կովկասյան կորպուս. առաջին հաղթանակը տոնել է Ելիզավետպոլի տակ 1826 թ. սեպտեմբերի 13-ին՝ պարտության մատնելով Աբաս-Միրզայի պարսկական բանակին: 1827 թ. մարտի 28-ին նշանակվել է Կովկասյան կորպուսի զխավոր հրամանատար՝ փոխարինելով Ա. Երմոլովին: 1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանի բերդի գրավման համար ստացել է **կոմս Երիվանսկի** տիտղոսը: Թուրքմենչայի 1828 թ. պայմանագրի կնքումից հետո զխավորել է ռուսական բանակը 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում: Կարսի բերդի հունիսի 23-ի պաշարման ժամանակ թուրք պարետին ուղարկել է հետևյալ երկտողը. «Անմեղներին՝ ներում, անհնազանդներին՝ մահ, մտածելու համար՝ մեկ ժամ»: Փոքր-ինչ անց բերդը հանձնվել է:

1830 թ. թողել է Կովկասը և ուղևորվել Լեհաստան ճնշելու այնտեղ ծագած ապստամբությունը, արժանացել **սրբազնագույն իշխան Վարշավսկի** տիտղոսին: Կյանքի մայրամուտին մասնակցել է 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմին: Սիլիստրիայի ամրոցի համար կռիվներից մեկում ծիուց ընկել և կոնտուզիա է ստացել: Պատերազմի ավարտին Գոմելում կնքել է իր մահկանացուն (տես «Восточная энциклопедия Ситина», т. 17, СПб, 1914, էջ 313-316):

3 **Երիցյան Ալ.**, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 355:

նել Ռուսաստանի բարձրագույն պարզևներից մեկին՝ Ալեքսանդր Նևսկու շքանշանին:

Ի դեպ, Մատենադարանի Լազարյանների արխիվում մեր ուշադրությունը գրավեց Խաչատուր Լազարյանին ուղղված Ներսես Աշտարակեցու նամակը, որում արքեպիսկոպոսը հայտնում է ժողովրդի և իր տարակուսանքը Ալեքսեյ Երմոլովին Իվան Պասկևիչով փոխարինելու հրամանի կապակցությամբ, որով Երմոլովն ուղարկվում էր պայքարելու երկրի թշնամիների դեմ. «Բարձրագույն հրաման առ նորին բարձր գերագանց Ալեքսեյ Պետրովիչ Երմոլով հռչակաւոր կուսակալը՝ լինել վրեժխնդիր վնասապարտից հպատակաց Իւրոյ Մեծութեանն.... Կասկածք կանխափորձք, որք սասանեցուցանեն զմիտս մեր և բազմաց, թէպէտ մեծ է իմեզ յոյսն հաստատեալ ի վերայ ամենայնսն»<sup>4</sup>, իսկ կովկասյան բանակի հրամանատարությունը հանձնվում էր նոր գեներալ Իվան Պասկևիչին: Նամակում Ներսես արքեպիսկոպոսը հայտնում էր, որ անձամբ իրեն հուզում է դա, քանի որ Երմոլովն արդեն քաջածանոթ էր «պարսից բարբարոսություններին և նենգություններին» ու կարողանում էր քրիստոնյաներին պաշտպանել պարսից «մշտնջենավոր ավագակություններից»<sup>5</sup>: Ներսես Աշտարակեցու նամակը թվագրված է 1826 թ. սեպտեմբերի 13-ով, այսինքն՝ գրվել է Ելիզավետպոլի ճակատամարտից անմիջապես հետո: Եվ քանի որ ճակատամարտը ղեկավարում էր Իվան Պասկևիչը, կարելի է ենթադրել, որ արքեպիսկոպոսին արդեն հասել էր տեղեկությունը, որ շուտով Երմոլովին փոխարինելու է գեներալ Պասկևիչը: Այդուհանդերձ, հետագա իրադարձությունները և Ներսեսի հանդեպ Իվան Պասկևիչի անվստահությունը մեզ հուշում են, որ արքեպիսկոպոսն էլ իր հերթին այդ ժամանակից սկսած անվստահություն է տածել Իվան Պասկևիչի հանդեպ, և հավանաբար վիրահայոց թեմակալ առաջնորդը դրա համար հիմնավոր պատճառներ է ունեցել... Համենայնդեպս, որքանով հայտնի է, Պասկևիչ-Ներսես հակամարտությունը վերագրվում է ռուս-պարսկական պատերազմի վերջին շրջանին, ինչն այս նամակի տրամաբանությանը հակառակ է, քանզի նամակը թվագրված է մի ամսաթվով, երբ պատերազմը դեռ նոր-նոր էր սկսվել:

4 Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գ. 9, վավ. 82, թ. 1:  
5 Նույն տեղում:

Երևանի բերդը նվաճողը բազում ամբաստանագրեր է ուղարկում արքունիք. Աշտարակեցին «մեղադրվում էր» հայության շահերը պաշտպանելու, Ռուսաստանին միացվելիք հայկական տարածքներն ընդարձակելու մտադրություն ունենալու, Էջմիածնի հարստությունները հայ եկեղեցու տնօրինությանը հանձնելու, պետական գործերին խառնվելու մեջ: Մեղադրանքներից մեկի հիմքում էլ Էջմիածնի վանքը պաշտպանելու համար 200 հոգուց բաղկացած մի զորաջոկատ կազմելու Ներսես Աշտարակեցու ցանկությունն էր, որում Պասկևիչը տեսնում էր հայկական բանակի ստեղծման փորձ: Ինչպես երևում է, նույնիսկ Պասկևիչի ներկայացրած «մեղադրանքներում» հստակ ուրվագծվում են Ներսես Աշտարակեցու ազգանվեր գործունեությունը, հայությանը նպաստ բերելու նրա ձգտումը: Պետք է նկատել, սակայն, որ Իվան Պասկևիչն ուներ անհանգստանալու մի կարևոր առիթ ևս. Եփրեմ կաթողիկոսը 1828 թ. դեկտեմբերի 20-ի նամակում խնդրում էր կայսր Նիկոլային տեսնել արքեպիսկոպոս Ներսեսին որպես հայոց կաթողիկոսի ժառանգորդ:

Պետք է նկատել, որ Ներսեսին ամբաստանելու գործում պակաս դերակատարում չեն ունեցել Պասկևիչի սիրեցյալ երկու հոգևորականները՝ Սերովբե և Զաքարիա վարդապետները, հատկապես Սերովբեն, որը մեծ ցանկություն է ունեցել գրավելու վիրահայոց թեմի առաջնորդարանը: Այսպես՝ Ներսես արքեպիսկոպոսին հասցեագրված 1830 թ. հուլիսի 3-ի նամակում Հարություն Ալամդարյանը հայտնում էր, որ Զաքարիա վարդապետը Հաղպատում սպասում է, որ Սերովբեն Վրաստանի թեմակալ կարգվի, «ինքն էլ դառնա նրան փոխարինողը Աստրախանում», և որ «Կուսակալը (նկատի ունի Պասկևիչին – Հ. Հ.)» Սերովբեի և Բեհբույթովի դրդմամբ կաթողիկոսին խնդրում է իրեն էլ հեռացնել Վրաստանից<sup>6</sup>: Իհարկե, հարցն այն չէր, որ Ներսեսի տեղափոխմամբ տուժում էին իր «կուսակցության» հոգևորականները. հետագայում, օրինակ, Հարություն Ալամդարյանը հաղորդում էր, որ Ներսեսի թեմակալության դադարումից հետո իր նկատմամբ հետապնդումները գնալով ուժգնանում են: «Նկատելով, որ Ներսես արքեպիսկոպոսը արձակված է Վրաստանի թեմակալի պաշտոնից, – գրում էր Ալամդարյանն Աշտարակեցուն, – Մինողը հրամայել է Վրաստանի փոխթեմակալ Միմեոն արք. Բզնու-

6 Տե՛ս Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 152, վավ. 205, թ. 1:

նուն՝ որ պատարագին պետք է հիշել կաթողիկոսի և կայսեր անունները միայն... խստորեն պատվիրել է նաև դադարեցնել Ներսես Աշտարակեցու անվան հիշատակումը պատարագին»<sup>7</sup>:

Դա դեռ ամենը չէր. 1830 թ. նոյեմբերի 20-ին գրած մեկ այլ նամակում Ալամդարյանը կրկին բողոքում էր, որ Սերովբեի դրոմամբ որպես խռովարար արքային է Հաղպատ, որտեղ անկարող էր մնալ, ուստի խնդրում էր Ներսես Աշտարակեցուն տեղափոխել իրեն: Ուշագրավ է, որ նամակում Ալամդարյանը հայտնում էր, որ «մի ռուս աստիճանավոր գրություն է ուղարկել կայսրին Էջմիածնում տիրող անկարգությունների մասին»<sup>8</sup>: Նկատենք, որ այդ ժամանակ արդեն կաթողիկոս էր ձեռնադրվել Ի. Պասկևիչի հովանավորյալ Հովհաննես Կարբեցին:

## 2. Աքսո՞ր, թե՞ քաղաքական հեռահար նպատակ

Ներսես Աշտարակեցի-Իվան Պասկևիչ հակամարտությունն աստիճանաբար դուրս է գալիս անձնական հարաբերությունների ոլորտից և ձեռք բերում հստակ քաղաքական կերպարանք: Բայց ի վերջո ռազմական նախարար կոմս Ա. Չերնիշևի միջնորդությամբ գործը փակվում է<sup>9</sup>, քանի որ արքունիքում արդեն քաջատեղյակ էին գեն. Պասկևիչի անձնական փառասիրությանը և ինքնագոհությանը, ուստի հարցը չարելու համար Ներսես Աշտարակեցուն առաջարկում են գլխավորել Բեսարաբիայի թեմը:

Այն, որ Ներսես Աշտարակեցին նեղսրտած է եղել ռուսական կառավարության այս «նախաձեռնությունից», երևում է Քիշնևից 1832 թ. մայիսի 16-ին Հարություն Վարդանյանին գրած նրա նամակից. խոսելով իրեն պատճառված նեղություններից՝ նամակի վերջում նա հորդորում էր Հ. Վարդանյանին առժամանակ համբերել, ինչպես ինքն է համբերում իր այսքան երախտիքները մոռացության տրվելու դեպքում<sup>10</sup>: Նա հայտնում էր նաև, որ մերժել է նույնիսկ Պետերբուրգ և Մոսկվա գնալու պետական առաջարկները: «Չպետք

7 Նույն տեղում, վավ. 206, թ. 1, թղթ. 147, վավ. 32, թ. 1:

8 Նույն տեղում, թղթ. 152, վավ. 207, թ. 1:

9 Ա. Չերնիշևը միաժամանակ Պասկևիչին խորհուրդ էր տվել «գոնե առերես հարգանքով վերաբերվելու հայ ժողովրդի սերը վայելող պաշտոնական անձանց և հատկապես հոգևորականությանը» (Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 111, գ. 79, վավ. 7):

10 Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 147, վավ. 30, թ. 2:

է զարմանալ թշնամիների կայտառելուն և ճախրելուն. ուռկանը ընկած ձկներն էլ են կայտառում»<sup>11</sup>, - գրել է Ներսես Աշտարակեցին:

Ուշագրավ է, որ Ներսես Աշտարակեցին միևնույն ժամանակ զգուշացնում էր իր մասին չարախոսողներին, որ «չափն անցնելու դեպքում գրելու է փոխարքային (սկստի ուներ բարոն Ռոզենին, որը կառավարչապետի պաշտոնում արդեն փոխարինել էր Իվան Պասկևիչին և լավ հարաբերությունների մեջ էր իր հետ - Հ. Հ.)»<sup>12</sup>:

Ներսես արքեպիսկոպոսն իր հոգևոր առաջնորդությունը շարունակում է Քիջնևում: Ավելին՝ վերջինիս համար հիմնվում է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հոգևոր թեմը, որը ներառում էր նաև ռուսական երկու մայրաքաղաքները՝ Մոսկվան և Պետերբուրգը: Դրանից անհանգստացած Ի. Պասկևիչն այստեղ էլ շտապում է հայտնելու իր դժգոհությունը, քանզի, նրա կարծիքով, Բեսարաբիայի թեմի ընդլայնումը կուժեղացներ Ներսեսի ազդեցությունը ռուսական արքունիքում<sup>13</sup>:

Այժմ մի կարևոր դիտարկում. մեր պատմագիտական երկերում հարցի առնչությամբ ֆելդմարշալ Իվան Պասկևիչին է վերագրվում վերջնական հաղթանակը, իսկ Ներսես Աշտարակեցու՝ Բեսարաբիայում թեմակալությունը ներկայացվում է որպես աքսոր: Մինչդեռ պետք է սկսվեր ռուս-թուրքական պատերազմը, և Բալկանյան թերակղզու հայերի աջակցությունը ստանալու համար իբրև ամենից հարմար թեկնածու ռուսական հրամանատարության կողմից դիտարկվում էր Ներսես արքեպիսկոպոսը, և կարծում ենք՝ բացատրելու կարիք չկա, թե ինչու: Ասվածը հաստատելու համար պարզապես դիմենք Ներսես Աշտարակեցու կենսագիր, պատմաբան Ալեքսանդր Երիցյանին. «Պատրաստվելով օսմանցոց դեմ պատերազմ բանալու, տերությունը կարևոր էր համարում Բեսարաբիայում ունենալ մի կտրիճ ու գործունյա հայ եպիսկոպոս, որ կարողանար Արդության Հովսեփ արքեպիսկոպոսի պես տարածել ռուսական ազդեցությունը Բալկանյան թերակղզու հայ ժողովրդի վրա: Այդ ժամանակվա հայ հոգևորականության մեջ այդպիսի դեր կատարելու համար ամենից ընտրյալը մեկն էր՝ Ներսես արքեպիսկոպոսը»<sup>14</sup>: **Ուրեմն ռուսական**

11 Տե՛ս նույն տեղում:

12 Նույն տեղում:

13 Տե՛ս Էջով Դ., Сношения Петра Великого с Армянским народом, СПб, 1898, էջ СХХХV:

14 Երիցյան Ա., նշվ. աշխ., մաս Ա, էջ 359:

**արքունիքի ձեռնարկած քայլը պետք է դիտել ոչ թե արքոր, ինչն ընդունված տեսակետ է մեզանում, այլ ռուսական կառավարության հեռահար մի նպատակ, որը պետք է իրագործվեր:**

Իսկ արքեպիսկոպոս Ներսեսն իր գործունեությամբ արդեն ապացուցել էր, որ այդ հարցում իրեն հավասարը չկար հայ իրականության մեջ: Մեր միտքը հաստատում են նաև գեն. Ա. Բենկենդորֆի՝ 1828 թ. ապրիլի 13-ին Ի. Պասկևիչին ուղղված նամակի հետևյալ տողերը. «...շահավետ կլիներ, եթե Բեսարաբիա կարողանար գնալ Ներսես Սրբազանը, որը հայտնի է ինչպես իր ապացուցած հավատարմությամբ և մատուցած ծառայություններով, նույնպես և իր փորձառությամբ ու հայերի վրա ունեցած իր հզոր ազդեցությամբ»<sup>15</sup>: Ասվածը հաստատում են նաև գեն. Ի. Պասկևիչի գեկուցագրի հետևյալ տողերը. «Արքեպիսկոպոս Ներսեսին այնտեղ ուղարկելը գտնում եմ շահավետ՝ հաշվի առնելով նրա նվիրվածությունը ռուսական կառավարությանը և հայ ժողովրդին վերաբերող գործերում նրա բավարար փորձառությունը»<sup>16</sup>:

Ի դեպ, Մատենադարանի Լազարյանների արխիվում պահպանվում է Ի. Պասկևիչի այն նամակը, որում թագավորի անունից Ներսես արքեպիսկոպոսը հրավիրվում էր Բեսարաբիայի թեմ՝ «թուրքաց տիրապետության տակ գտնվող հայերի շրջանում համապատասխան աշխատանք ծավալելու համար»<sup>17</sup>: Լազարյանների արխիվում պահպանվում է նաև Բենկենդորֆի նամակը՝ ուղղված Եփրեմ կաթողիկոսին, որում, փաստելով հայ ժողովրդի հանդեպ թագավորի բարյացակամությունը, գեներալը միաժամանակ նշում էր, որ «ներկա պատասխանատու շրջանում կարևոր է կապ հաստատել արևմտահայության հետ»<sup>18</sup>: Հավելենք նաև, որ գեներալ Բենկենդորֆը ջերմ հարաբերությունների մեջ էր Լազարյանների հետ և ամեն հարցում օժանդակել է նրանց. նրա միջոցով Լազարյանները կարևոր տեղեկություններ են հաղորդել թագավորին: Եվ այն, որ Ներսես արքեպիսկոպոսն առժամանակ հեռու մնաց Ի. Պասկևիչի խարդավանքներից, և կայսրն զգուշացավ միանշանակ Պասկևիչի կողմը բռնելուց, անտարակույս, գեներալ Ա. Բենկենդորֆի շնորհն էր:

15 «Акты археографической комиссии Кавказа», т. VII, Тифлис, 1878, с. 253.

16 Նույն տեղում, էջ 254:

17 Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, վավ. 51:

18 Նույն տեղում, վավ. 141:

Մեր այս տեսակետը հաստատում է նաև Մատենադարանի Լազարյանների արխիվում պահպանվող վավերագիրը: Դա Ներսես արքեպիսկոպոսին ուղղված գե՛ն. Ա. Բենկենդորֆի նամակն է. «Հայերի ներկա դրությունը թուրքական տարածքներում իր վրա է սևեռել Մեր Կայսր Տիրակալի բարեգութ ուշադրությունը՝ ողջ հայ ժողովրդի համար միակ և գլխավոր նպատակով միայն, որպեսզի այս ժողովուրդն օգտվի բարեկեցությունից բոլոր երկրներում, ենթարկվի իշխանություններին...»<sup>19</sup>: Որքանով նկատում ենք, նույն ձևակերպումներն են: Տարբերությունը հաջորդող մեկնաբանության մեջ է. «Այս բարեհաճությամբ էլ Կայսր Տիրակալը ցանկացել է, որ ես դիմեմ Ձերդ բարեճությանը՝ հրավիրելով Ձեզ Բեսարաբիայի թե՛մ որպես հարակից շրջանների և մարզերում ապրող հայերի թե՛մակալ առաջնորդ՝ փորձառու և ջանասեր Ձեր հայրենակիցներին վերաբերող հարցերում...»<sup>20</sup>: Նամակի այս տողերը մեկ անգամ ևս հաստատում են, որ Ներսես Աշտարակեցուն Բեսարաբիա ուղարկելը չի կարելի դիտարկել որպես Ի. Պասկևիչի կազմակերպած աքսոր, այլ այն թելադրված էր ռուս-թուրքական պատերազմում Բեսարաբիայի և Վալախիայի հայերին ոտքի հանելու ռուսական կառավարության հեռահար նպատակով: Իսկ որ այդ գործում Ներսեսն իրավամբ հավասարը չուներ, ռուսական իշխանությունները քաջ գիտեին. «Ձեր անձնական մասնակցությունը հայ ժողովրդին այլահավատներից ազատելու գործում, անկասկած, ցանկալի հաջողություն է խոստանում, - ասվում էր այնուհետև նամակում: - Ուստի խիստ անհրաժեշտ է, որ չափազանց զգույշ, հավատարիմ մարդկանց միջոցով կամ անձնապես ուղղակի կապ հաստատեք Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի և մյուս հոգևորականների հետ, որպեսզի նրանցից յուրաքանչյուրն իր հնարավորությունների չափով համագործակցի Ձեզ հետ: Ուստի ընդհանուր բարօրության համար անհրաժեշտ են կանխամտածված քայլեր, որպեսզի ոչ մի դեպքում մեր մտադրությունները չբացահայտվեն: Առավել պարզության համար նամակը կթարգմանվի նաև հայերեն»<sup>21</sup>: Որքան երևում է նամակից, **Ներսեսի նշանակմամբ ռուսական կառավարությունը միայն Բեսարաբիայի հայերի աջակցության խնդրի լուծումը չի հետապնդել. նա-**

19 Նույն տեղում, թ. 1:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում, թ. 2:





ստանաք արժանի գնահատական՝ տեսնելով Ձեր հաջողությունները և աստվածահաճո ձեռնարկները»<sup>23</sup>:

Ի վերջո Նիկոլայ կայսրը հավանություն տվեց այդ ընտրությանը, և Ներսես Աշտարակեցին հրավիրվեց Պետերբուրգ<sup>24</sup>: Այն, որ հայոց նոր հայրապետը շքեղ ընդունելության է արժանացել կայսեր կողմից Պետերբուրգում, հաստատում է նաև Ալ. Երիցյանի արխիվում պահպանվող՝ Ներսես Աշտարակեցու ձեռամբ գրված վավերագիրը, որում ասվում է, որ Աշտարակեցին կայսրի մոտ ընդունելության ժամանակ «նրան հիշեցրել է իր վաղեմի խոստումները հայ ժողովրդին»<sup>25</sup>:

### 3. Հետգրություն

Արդար լինելու համար նշենք նաև, որ Պասկևիչ-Աշտարակեցի հակամարտությունը պետք է վերագրել միայն ռուս-պարսկական պատերազմի ավարտական փուլին և հետագա ժամանակաշրջանին: Ավելին, ինչպես վկայում են Իվան Պասկևիչի՝ կայսերն ուղղված գեկուցագրերն ու նամակները և նրա օրագրի գրառումները, նա Աշտարակեցու մասին բավական դրական գնահատականներ է տվել: Բնութագրական են գեներալ Ա. Կրասովսկուն ուղղված Ի. Պասկևիչի նամակի հետևյալ տողերը. «Քանի որ ռազմական գործերը Ձեզ լիովին կգբաղեցնեն, ես հարմար գտա Երևանի և Էջմիածնի վանքի մոտակա գյուղերի բնակիչների կառավարումը հանձնել արքեպիսկոպոս Ներսեսին, նկատի ունենալով նրա փորձառությունը, ողջամտությունն ու մեր կառավարության հանդեպ ունեցած նրա նվիրվածությունը: **Բոլոր գործերը կատարիր միմիայն Ներսեսի համաձայնությամբ** (ընդգծումը մերն է – Հ. Հ.)»<sup>26</sup>: Ուշագրավ է նաև ռուս նախարար Բլուդովի՝ Ներսեսին ուղղված 1831 թ. հուլիսի 11-ի նամակը, որով նախարարը հայտնում էր, որ կայսրը «համաձայն է

23 Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 400, թ. 1:

24 Թե որքան մեծ էր Ներսես Աշտարակեցու հեղինակությունն արքունիքում, վկայում է նաև այն փաստը, որ Ներսեսի՝ կաթողիկոս ընտրվելու տարում կայսրը չկարողացավ մերժել նրա դիմումը՝ հայ եկեղեցուն պատկանող գույքն ազատելու ամեն տեսակ հարկերից, և Սենատի հատուկ հրովարտակով այն շուտով հաստատվեց (տես Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 107, գ. 37, վավ. 16):

25 Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 148, վավ. 229, թ. 2:

26 Երիցյան Ալ., նշվ. աշխ., մաս Ա, էջ 245:

կատարելու նրա խնդրանքը՝ իր մոտ ուղարկելու Սիմեոն արք. Բզնու-նուն և Հարություն Ալամդարյանին»<sup>27</sup>:

Մյուս կողմից՝ արխիվային նյութերի և ժամանակի պատմագիտական գրականության ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ իր տեղափոխումը որպես արքունի ներկայացնելուն ավելի հակված է եղել ինքը՝ Ներսես Աշտարակեցին: Այսպես՝ 1832 թ. փետրվարի 27-ին գրած նամակում նա հայտնում էր, որ վիրավորված է իր նկատմամբ նման վերաբերմունքից, «թևազուրկ է և պետության դեմ պայքար չի կարող մղել», «Բեսարաբիա է քշվել Պասկևիչի պահանջով», որը պաշտպանում է իր հակառակորդներին<sup>28</sup>:

Ուշագրավ է նաև, որ, Վրաստանից հեռանալով, Ներսես Աշտարակեցին շարունակել է հետևել թե՛ բուն Հայաստանում և թե՛ վիրահայոց թեմում տեղի ունեցող իրադարձություններին: Այդ են հաստատում իր եղբորորդի Հովակիմին և երևելի թիֆլիսահայերին ուղղված նրա նամակները, որոնք պահպանվում են Ալ. Երիցյանի արխիվում<sup>29</sup>: Կամ, ասենք, նամակներից մեկում խոսելով արևմտահայերի գաղթի մասին, որի կազմակերպիչներից մեկն էլ, ի դեպ, ինքն էր, գրում էր, որ հավանություն է տալիս բայազետցիների և ղարսեցիների գաղթին՝ լավ ապագա խոստանալով նրանց<sup>30</sup>: Ի դեպ, 1833 թ. հունվարի 2-ին Հովակիմին գրած մեկ այլ նամակում Ներսես Աշտարակեցին պատվիրում էր «խոհեմ լինել մարդկանց հետ հարաբերվելիս», ինչպես նաև «խաղողի վազի տեսականի» պատրաստել կառավարչապետ Միխայիլ Վորոնցովին նվիրելու համար: Հայտնում էր նաև, որ Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը գանգատ է գրել կայսրին, որ Ներսեսն իրեն չի ենթարկվում, և խնդրել, որ կայսրը նրան Թիֆլիս չվերադարձնի<sup>31</sup>: Եվ այդուհանդերձ, իր բարեկամ Շերմազան Վարդանյանին գրած նամակներից մեկում հաստատում էր, որ «...վաղ թե ուշ իր բոլոր թշնամիները ամոթահան են լինելու», ավելին՝ վերջինիս հորդորում էր չտխրել, այլ մաղթել իրեն կյանք, որպեսզի պայքարի գրպարտիչների ու թշնամիների դեմ<sup>32</sup>:

27 Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 148, վավ. 3, թ. 1:

28 Տե՛ս նույն տեղում, վավ. 22, թ. 1:

29 Տե՛ս նույն տեղում, թղթ. 148, վավ. 38, 63, 64 և այլն:

30 Տե՛ս նույն տեղում, թղթ. 159, վավ. 242:

31 Տե՛ս նույն տեղում, վավ. 63, թ. 1:

32 Տե՛ս նույն տեղում, վավ. 245, թ. 2:

Ալ. Երիցյանի արխիվում հանդիպեցինք նաև կաթողիկոս Հովհաննես Կարբեցու՝ Ներսեսին վիրավորանք հասցնելու մասին մեկ այլ գործի: Փորձ է արվել Բեսարաբիայի թեմի հաշվեկշռից Աստրախանին փոխանցելու Նոր Նախիջևանը և հարակից հայկական որոշ եկեղեցիներ: Այդ մասին կարդում ենք կոմս Ա. Բենկենդորֆի՝ 1841 թ. ապրիլի 30-ին Ռուսաստանի ներքին գործերի նախարար կոմս Ստրոգանովին ուղղած գրությունում: Ուշագրավ է, որ նամակ-գրությունում գեներալը նախ և առաջ բարձր էր գնահատում Ներսես Աշտարակեցու մատուցած ծառայությունները ռուսական պետությանն ու հայ եկեղեցուն. «Հայ արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին գործունեություն է ծավալում Ռուսաստանում արդեն 50 տարի և մեծ ծառայություններ է մատուցել կառավարությանն ու հայ ժողովրդին, ուստի արդարացիորեն արժանացել է մեծ հարգանքի, սիրո և երախտագիտության: Այսպիսի եզրակացություններից հետո անտրամաբանական են, և նույնիսկ չպետք է թույլ տալ այն փոփոխությունները, որոնք կատարվեցին հայտնի անբարյացակամ մարդկանց կողմից՝ Ներսես արքեպիսկոպոսին զրկանքներ հասցնելու և վիրավորելու համար, առավել ևս անհասկանալի են հայկական թեմերի կառուցվածքում նոր փոփոխությունները, որոնք նախատեսված են Ինքնակալի կողմից 1836 թ. մարտի 11-ին հաստատված կանոնադրությամբ: Նույն կերպ էլ պատճառ չկա վիրավորելու Ներսես արքեպիսկոպոսին, որն աչքի է ընկել ռուսական կառավարությանը մատուցած իր գերազանց ծառայություններով և վայելում է հայ ժողովրդի սերը, մինչդեռ արքեպիսկոպոս Սերովբեն հայտնի է իր անբարեհուսությամբ.... Հաղորդելով այս ստուգված փաստերը՝ ակնկալում եմ Ձերդ բարեծնության բարեհաճությունը....»<sup>33</sup>:

Ուշագրավ է նաև, որ գրությանը հետևել է կոմս Ստրոգանովի պատասխան նամակը, որում ռուսաց կառավարության ներքին գործերի նախարարն իր հավանությունն էր տալիս Ներսես արքեպիսկոպոսին կոմս Բենկենդորֆի տված գնահատականներին: «Թեմակալ առաջնորդ Ներսեսը,– ասվում էր նամակում,– հայոց եկեղեցու **առաջին արժանավոր, նվիրված և իմաստուն առաջնորդներից է** (ընդգծումը մերն է – Հ. Հ.): Իր կատարած գործերով ու սխրանքներով նա վայելում է համընդհանուր հարգանք, սեր և շնորհապար-

33 Նույն տեղում, թղթ. 148, վավ. 209, թթ. 1-2:

տություն: Բարձրագույն տիրակալի տված շնորհներից հայտնի են նաև Ռուսաստանի և Հայաստանի օգտին Ներսես արքեպիսկոպոսի կատարած գործերը հատկապես Պարսկաստանի և Թուրքիայի դեմ պատերազմներում... Աստրախանի թեմակալ Սերաֆիմը (խոսքը գե՛ն. Իվան Պասկևիչի «սիրելի արքեպիսկոպոս» Սերովբեի մասին է – Հ. Հ.) երբեք որևէ նշանակալի ծառայություն չի մատուցել ռուսական կառավարությանը և չունի այն հարգանքն ու արժանիքը, ինչ Ներսես արքեպիսկոպոսը... նա խնդրել էր ներքին գործերի նախարարությանը Բեսարաբիայի թեմից Նախիջևան քաղաքը և շրջակա գյուղերը միացնել Աստրախանի թեմին: Սակայն այս շահախնդրությունը ոչ միայն վիրավորական է Ներսես արքեպիսկոպոսի համար, այլև անօրինական ու անընդունելի... Ավելին՝ շատ ու շատ փաստերով ու եզրակացություններով ապացուցված է, որ արքեպիսկոպոս Ներսեսն իր ստացած վարձավճարների մեծ մասն ուղղել է հասարակական կարիքներին և ուսումնական հաստատությունների կայացմանը: Դրան հակառակ՝ արքեպիսկոպոս Սերաֆիմն ամեն ինչ անում է սեփական օգուտները բազմապատկելու համար... ոչ մի անջատում չպետք է լինի Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմից Աստրախանի թեմի օգտին»<sup>34</sup>: Ինչպես նկատում ենք, ռուսաց կառավարությունը միանշանակորեն և կտրականապես հանդես էր գալիս Ներսես Աշտարակեցու օգտին:

Հարցի առնչությամբ հետաքրքիր տեղեկությունների հանդիպեցինք նաև Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում: Մեր ուշադրությունը գրավեցին Ներսես Աշտարակեցուն ուղղված Նիկոլայ կայսրի 1828 թ. հունվարի 25-ի հրամանագրի հետևյալ տողերը. «Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար, գեներալ-ադյուտանտ Պասկևիչը բազմիցս գեկուցել է ինձ դրվատանքի արժանի Ձեր սխարանքների մասին՝ ընդգծելով, որ պատերազմի ողջ ընթացքում Դուք աչքի եք ընկել առանձնակի ջանասիրությամբ՝ հոգուտ Ռուսաստանի...»<sup>35</sup>:

Ներկայացնելով հակամարտության մանրամասները՝ ռուս պատմաբան և Իվան Պասկևիչի կենսագիր Միխայիլ Շչերբատովը համարձակություն է ունեցել արձանագրելու, թե «Այնուհանդերձ, չի կա-

34 Նույն տեղում, թ. 2:

35 «Акты археографической комиссии Кавказа», т. VII, с. 252.

րելի բացառել, որ միապետի բարեկամական խորհուրդներում **անվիճելի հիմքեր կային** (ընդգծումը մերն է – Հ. Հ.): Ինքը՝ Պասկևիչը, ստորագրելով հաշտության պայմանագիրը, Թուրքմենչայից մեծ իշխան Միխայիլ Պավլովիչին ուղղված նամակում հայտնում էր. «Իմ բնավորությունն այստեղ բավականին փոխվել է: Հաճախ պահանջելով անհնարինը՝ հնարավոր չէ պահպանել հոգու սովորական հանգստություն: Ավելին անելու ցանկությունը, քան քո պարտքն է, ինձ դարձրել է չափազանց դյուրագրգիռ, և ականա հաճախ ինձնից պահանջվում է ավելին, որը ոչ մեկին դուր չի գալիս»<sup>36</sup>:

Ներսես արքեպիսկոպոսի և գեն. Իվան Պասկևիչի մասին հետաքրքիր իրողություն է ներկայացված նաև Ալ. Երիցյանի գրքում. «Քանի մը անգամ տպագրության մեջ հիշված է և այժմ էլ կենդանի ականատեսներ պատմողներ կան, որ Ներսեսը մինչև իր կենաց վերջին րոպեն ձախ ծոցի գրպանում մի թուղթ է պահել, որից չէր բաժանվում գիշեր ու ցերեկ: Թե ինչ բովանդակություն ուներ այդ թուղթը, ոչ ոք չգիտեր, որովհետև նա ոչ ոքու ցույց չէր տալիս: Բայց երբ որ նա Բեսարաբիայից վերադարձավ կաթողիկոսական վեհաստիճանով, և մտերիմների հետ խոսք ու զրույց էր լինում Պասկևիչի ու անցած գնացած անցքերի մասին, ծերունի հայրապետը ձեռքը դնում էր ձախ ծոցի վրա և խորին հառաչանքով ասում՝ «Այստեղ է կաշկանդված Պասկևիչը»<sup>37</sup>:

Ջուր չէր, որ Խրիմյան Հայրիկը, հետագայում համեմատելով իրեն Ներսես Աշտարակեցու հետ, ականածանքով գրում էր. «Կնախանձեն Ներսեսի արիասիրտ ոգուն ու աննկուն հզոր կամքի վրա և համեմատելով խեղճուկս նրա հետ՝ կգտնեմ ինչպես եղջրավոր մի խոյ և անեղջուր մի գառնուկ: Նա մեջքը տվեր էր մի հաստաբուն կաղնի ծառին, իսկ գառնուկին հենարան միայն Քրիստոսի խաչն է: Նրա ժամանակ տիրում էր բուռն քաղաքականություն, իսկ մեր ժամանակ՝ նուրբ դիվանագիտություն, և գիտենք, թե այդ նուրբքը որչափ դժվարին է, քան թե բուռն»<sup>38</sup>:

Եվ վերջապես, Ներսես արքեպիսկոպոսը բնավ միայնակ չէր այս հակամարտությունում: Ռուսական արքունիքում նա ուներ ամուր հենարան, աջակիցներ, որոնք Պասկևիչին հավասար կարող

36 Шербагов М., Генерал-фельдмаршал князь Иван Феодорович Паскевич, СПб, 1890, с. 105.

37 Երիցյան Ա., նշվ. աշխ., մաս Ա, էջ 356:

38 Նույն տեղում, մաս Բ, Թիֆլիս, 1895, էջ 1:

Էին ներկայանալ կայսրին. դրանք Լազարյաններն էին: «Նրանց շնորհիվ,- գրում է Երիցյանը,- Ներսեսը ներկայանում էր բարձրագույն իշխանությանը առաջ որպես մի շատ նշանավոր հովվապետ, որի նմանը Ռուսիո տերությունը տեսած չուներ Հովսեփ Արղությանից հետո: Ուստի միտք էր հղանում հրավիրել Ներսեսին Պետերբուրգ և արժանացնել նրան կայսեր շնորհների...»<sup>39</sup>:

### Եզրակացություններ

Համադրելով խնդրին առնչվող պատմական իրողություններն ու փաստերը՝ կարող ենք ասել, որ չի կարելի բացարձականացնել նաև գեն. Իվան Պասկևիչի և Նիկոլայ կայսրի բարեկամական հարաբերությունները Ներսես Աշտարակեցուն «աքսորելու» հարցում: Մեր կարծիքով՝ Ներսես արքեպիսկոպոսին Բեսարաբիայի թեմ ուղարկելը պետք է դիտարկել ռուսական կառավարության հետապնդած քաղաքական նպատակների համատեքստում. հարկ էր ստանալ Բեսարաբիայի հայության աջակցությունը սպասվող ռուս-թուրքական պատերազմում, իսկ Ներսեսն իր գործունեությամբ արդեն ապացուցել էր, որ այդ հարցում իրեն հավասարը չկար: Ավելին՝ Ռուսաստանի երկու մայրաքաղաքների՝ Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի ներառումը Բեսարաբիայի թեմի կազմում արդեն իսկ նշանակում էր Ներսես Աշտարակեցու դիրքերի ամրապնդում ու հեղինակության բարձրացում հայ հոգևորականության շրջանում և Ռուսական կայսրությունում ընդհանրապես: Այդ ամենը, անշուշտ, չէր կարող գնահատության չարժանանալ ռուսական արքունիքում: Հաշվի առնելով մի շարք հանգամանքներ և առաջին հերթին հավատարմությունը ռուսական գահին՝ 1843 թ. Ներսես Աշտարակեցին ընտրվում է Ամենայն հայոց կաթողիկոս:

Եվ վերջապես, ներկայացված պատմական փաստերը և արխիվային վավերագրերը ոչ միայն լրացնում են մեր գիտելիքներն այս հարցի վերաբերյալ, այլև Ներսես Աշտարակեցուն բնութագրում են որպես ականավոր քաղաքական և կրոնական գործչի:

Ներսես Աշտարակեցու նկատմամբ ցարական իշխանությունների երկակի վերաբերմունքում արտաքուստ նշմարվող հակասությունը

39 Նույն տեղում, մաս Ա, էջ 575:

իրականում պայմանավորված էր նրանց քաղաքականության մեջ երկու նպատակների ու դրանց իրագործման հանգրվանների առկայությամբ: **Առաջինում՝** Հայաստանը պարսկական և ապա թուրքական տիրապետությունից ազատագրելու հանգրվանում, Ներսես Աշտարակեցին ուղղակի անփոխարինելի էր թվում, սակայն երբ գալիս է **երկրորդ** հանգրվանը՝ երկրին տիրելու և այն գաղութացնելու ժամանակը, երբ հարկ էր մոռանալ նրան տրված խոստումները, Ներսեսի նման ռուսաց պետությանը ծառայություններ մատուցած անձնավորությունը նույն այդ պետության համար արդեն դիտվում էր որպես ավելորդ գլխացավանք: Ուստի նրան պարսկական ձակատից թուրքականն ուղարկելու որոշումը ցարական իշխանությունների հեռահար շահերի իրացման առումով թերևս լավագույն լուծումն էր իրենց առաջին նպատակից երկրորդին անցնելու բարդ գործընթացում:

**Հայկազ Ժ. Հովհաննիսյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 19-րդ դարի հայոց պատմության հիմնահարցերը (հայ-ռուսական հարաբերություններ, Հայկական հարց և այլն): Հեղինակ է 4 մենագրության և 70 գիտական հոդվածի:

Էլ. հասցե՝ [hovhaykaz@gmail.com](mailto:hovhaykaz@gmail.com)

Summary

## ON THE ISSUE OF CONFRONTATION BETWEEN NERSES ASHTARAKETSI AND IVAN PASKEVICH

Haykaz J. Hovhannisyan  
*Doctor of Sciences in History*

**Keywords** - Nerses Ashtaraketsi, Gen. Ivan Paskevich, confrontation, exile, Bessarabian diocese, Russian politics, reports, letters, analysis, discussion.

The conflict between the commander of the Russian army in the Caucasus, Gen. Ivan Paskevich, and the head of the Armenian diocese in Georgia, Nerses Ashtaraketsi, has repeatedly analyzed in the Russian and Armenian historiography.



This article presents new facts and realities regarding the issue, which, in our opinion, have not received due attention from historians. Comparing the historical realities and facts relating to this problem, we came to the conclusion that the sending of Nerses Ashtaraketsi to the Bessarabian diocese should not be considered as a link, which is the accepted point of view in Armenian historiography, but as a consequence of the goal pursued by the Russian government: to receive the support of the Bessarabian Armenians in the upcoming Russian-Turkish war. It is no secret that Archbishop Nerses proved by his activities that he had no equal in this matter. Moreover, the inclusion of two Russian capitals, Moscow and St. Petersburg, into the Bessarabian diocese already meant strengthening the position of Nerses Ashtaraketsi among the Armenian clergy and increasing his authority in Russia as a whole. And, finally, taking into account a number of circumstances, and first of all, the loyalty of Nerses Ashtaraketsi to the Russian throne, indisputably, could not go unnoticed by the Russian imperial court: the election of Nerses Ashtaraketsi as the Catholicos of all Armenians in 1843 is a clear confirmation of this.

The historical facts presented in the article and new archival documents not only supplement our historiographical knowledge on this issue, but also characterize Nerses Ashtaraketsi as a major political and religious figure.

## Резюме

### К ВОПРОСУ ПРОТИВОСТОЯНИЯ «НЕРСЕС АШТАРАКЕЦИ – ИВАН ПАСКЕВИЧ»

Айказ Ж. Оганесян  
*Доктор ист. наук*

**Ключевые слова** - Нерсес Аштаракети, ген. Иван Паскевич, противостояние, ссылка, русско-турецкая война, Бессарабская епархия, русская политика, рапорты, письма, анализ, обсуждение.

Конфликт, возникший между командующим русской армией на Кавказе ген. Иваном Паскевичом и предводителем Армянской епархии в Грузии Нерсесом Аштаракети, неоднократно становился предметом обсуждения в российской и армянской историографии.

В настоящей статье представлены новые факты, относящиеся к исследуемому вопросу, на которые, на наш взгляд, не обратили должного внима-

ния историки. Сопоставив исторические факты, касающиеся этой проблемы, мы пришли к выводу, что отправку Нерсеса Аштаракеци в Бессарабскую епархию не следует рассматривать как ссылку, что является принятой точкой зрения в армянской историографии, а как следствие преследуемой российским правительством цели: получить поддержку бессарабских армян в предстоящей русско-турецкой войне. Не секрет, что архиепископ Нерсес своей деятельностью доказал, что ему нет равных в подобных вопросах. Более того, включение двух российских столиц, Москвы и Санкт-Петербурга, в состав Бессарабской епархии уже означало укрепление позиций Нерсеса Аштаракеци среди армянского духовенства и повышение его авторитета в России. И, наконец, нужно учитывать приверженность Нерсеса Аштаракеци русскому престолу, которое безусловно, не могло остаться незамеченным царским двором. Избрание Нерсеса Аштаракеци Католикосом всех армян в 1843 г. является тому ярким подтверждением.

Представленные в статье исторические факты и новые архивные документы не только дополняют наши исторические знания по данному вопросу, но и характеризуют Нерсеса Аштаракеци как крупного политического и религиозного деятеля.

## REFERENCES

1. "Akty arxeograficheskij komissii Kavkaza", t. VII, Tiflis, 1878 (**In Russian**).
2. "Vojennaja enciklopedija Sitina", t. 17, SPb, 1914 (**In Russian**).
3. **Ezov G.**, Snoshenija Petra Velikogo s Armjanskim narodom, SPb, 1898 (**In Russian**).
4. Matenadaran, Al. Yerits'yanı arkhiv, t'ght'. 147, vav. 30, t'ght'. 148, vav. 3, 22, 38, 63, 64, 209, 229, t'ght'. 152, vav. 205, 207, t'ght'. 154, vav. 400, t'ght'. 159, vav. 63, 242, 245 (**In Armenian**).
5. Matenadaran, Lazaryanneri arkhiv, t'ght'. 103, vav. 82, t'ght'. 106, vav. 51, 141, t'ght'. 111, vav. 7, t'ght'. 107, vav. 16, t'ght'. 206, vav. 32 (**In Armenian**).
6. **Sh'erbatov M.**, General-fel'dmarshal knjaz' Ivan Fjedorovich Paskevich, SPb, 1890 (**In Russian**).
7. **Yerits'yan Al.**, Amenayn hayots' kat'oghikosut'yunē yev Kovkasi hayk' 19-rd darum, mas A, T'iflis, 1894, mas B, T'iflis, 1895 (**In Armenian**).